№ 108 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 27

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 27 № 108

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Յունիսի 1-ից մինչև տարվայ վերջը կարժենայ ՎԵՑ ռուբլի։

Դիմել Тифлисъ, редакція «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև յունիսի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղօրօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի։

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պօրտ-Արտուրի շրջանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐԻ ՇՐՋԱՆԸ

II

Քաղաքական ժամուլը շատ հետաքրքրված է այն հարցով թէ որքան զօրք կայ Պօրտ-Արտուրում և որքան մեծ է եապօնական զօրքը, որ գնացել է պաշարելու Պօրտ-Արտուրի ամրութիւնները։ «Н. Д.» լրագիրը առաջ է բերում զանազան աղբիւրներից ցուցումներ այդ մասին։ Կոմս Բեվենտլովի, որ զեստեղել է «Berliner Tageblatt» լրագրում մի շարք ուսումնասիրութիւններ ներկայ պատերազմի մասին, ենթադրում է, որ Պօրտ-Արտուրի պաշարման համար նշանակված եապօնական զօրքի թիւը պակաս չէ 60,000 հոգուց, չը հաշուելով այն ստուար վաշտերը, որոնք գտնվում են Լաօդունի հիւսիսում։

Բէյտերի գործակալութեան թղթակիցը հաղորդում է Նիւչժուանից, որ եապօնական ծրագրով՝ 100,000 հոգուց բաղկացած զօրքը մայիսի 30-ի մօտերքը կը փորձէ յարձակում գործել Պօրտ-Արտուրի վրա։ Եապօնացիները գիտեն, որ նրանց կորուստները ահագին կը լինեն, բայց կարծում են, որ աւելի լաւ է կրել այդ կորուստները, քան երեք ամվայ ընթացքում անգործութեան մատնել բազմաթիւ զօրքը։

«Morning Post» լրագրի թղթակիցը հաղորդում է Նիւչժուանից, թէ եապօնացիների կարծիքով ռուսաց զօրքի թիւը Պօրտ-Արտուրում հաւասար է 20,000 հոգու։ Եապօնացիների ասելով իրանց զօրքի թիւը Ցզինչժօուի մօտ եղել է 50,000։ Չինացիները, որոնք գտնվում էին Պօրտ-Արտուրում, փախչում են այնտեղից և լուրեր են տարածում, որ իբր թէ բերդում արդէն զգացվում է մթերքի պակասութիւն։ Մինչդեռ «Нов.» լրագրի բերած տեղեկութիւնները, որ նա քաղել է «Frank. Zeit.»-ից, ցոյց են տալիս, որ Պօրտ-Արտուրում բաւականաչափ մթերք կայ։ Մատակարարութեան գործը կազմակերպել է ինքը գեներալ Ստեսսելը ամենագործնական հիմունքների վրա։ Առաջին երկու ասիները կարգադրված է բաժանել զինուորներին օրական լիակատար բաժիններ։ Գեներալ Ստեսսել հաւատացնում է, որ մի քանի մարտկոցներ շինելուց յետոյ, որոնց վրա այժմ աշխատում են, բերդը կը դառնայ անմատչելի։ Բերդի շուրջը շատ տեղերում հողի մէջ թաղվում են ականներ։ Ոսկէսարի մօտ, ցամաքող նաւաշինարանների վրա աշխատանքները առաջ են գնում եռանդով, թէկուզ հանդիպելու լինեն մեծ դժուարութիւնների։

Օգտվելով Բուլդակովի հրատարակած «Ռուս-եապօնական պատերազմի օրագրութիւն» աշխատութիւնից մենք միւս անգամ կը տանք մեր ընթերցողներին մանրամասն տեղեկութիւններ Պօրտ-Արտուրի շրջանի մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բագու, մայիսի 17-ին

Թոյլ տուէք խնդրեմ, ձեր համակրելի թերթի միջոցով հայ հասարակութեան յայտնել հետեւեալը։

Շուտով լրանում է մեր յարգելի գրող Քաջբերունու (բժշ. Գ. Յովհաննիսեանի) յիսունամեայ գրականական գործունէութիւնը։

Հաւատացած եմ, որ հայ հասարակութիւնն անտարբեր չի գտնվիլ բարոյապէս վարձատրել և ցոյց տալ իր անկեղծ երախտագիտութեան զգացմունքը երկարամեայ բազմաչարչար մշակին, որը դեռ 60-ական թւականից յայտնի էր իր համեստ ու բարեխիղճ գրչով և նպաստաւոր գործունէութեամբ։

Տ. Բարութչեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բալախանի, ապրիլի 15-ին

«Մշակի» № 27-ի մէջ պատահմամբ կարդացի Ջիւանշիր գաւառի Մեծ Շէն գիւղից հաղորդած լուրը, երբ մի գործով նոյն գիւղումն էի—միայն թէ նոյն գիւղի ծխատէր քահանան հարսանիքի օրը իր խնամի գեղջուկից օժիտի շարքում պահանջել է և կօմոդ. և թէ նամուսաւոր գեղջուկը ուզեւորվել է Շուշի յիշեալ կօմոդը առնելու և ճանապարհին ցրտահար է եղել ու մեռել։

Կարդալով այդ լուրը, հետաքրքրվեցի ծանօթանալ դէպքի իսկութեան հետ և իմ հարց ու փորձից գեղջուկի բարեկամներից և ազգականներից, որոնցից կային և ական ականներ նրա մահվան դէպքում, իմացայ, որ նա գնացած է եղել ոչ թէ կամօդ առնելու, ինչպէս լրատուն է զրպարտել քահանային, այլ մի անձնական հաշիւ վերջացնելու Շուշում մի ծանօթ թուրքի հետ և վախճանվել է ոչ թէ ցրտահարից, այլ բաւական ծեր լինելով և գինու ազդեցութեան տակ թուրքի տան սանդուղքներից ցած իջնելիս ընկնում է ցած և գլուխը քարին դիպչում, այնպէս որ բժշկի օգնութիւնը անզօր է լինում փրկել նրան մահից։ Այս է իսկութիւնը, որը և կը վկայեն դէպքին ներկայ եղողները, այնպէս որ հարսանիքի հետ ոչ մի կապ չունի գեղջուկի Շուշի գնալը։

Ն. Անանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայիսի 26-ին Նորին Կայսերական Մեծութեան Թագուհի Կայսրուհու ծննդեան օրը Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում ու կրօնական միւս հաստատութիւններում (մզկիթներ, սինագօգներ) կատարվեցին զոհացողական մաղթանքներ, որոնց ժամանակ քաղաքի արուէստալից որոտաց թնդանօթի սովորական 21 հարուածը։ Երեկոյեան քաղաքը փառաւորապէս զարդարված էր լապտերներով ու ճրագներով, իսկ ամբողջ օրը դրօշակները ծածանում էին շէնքերի ճակատներին։ Իշխան կառավարչապետի բնակարանի դիմացը տեղաւորված վէնզէլի մօտ տեղի ունեցաւ հրաւառութիւն։

—

Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գ. Մ. Գոլիցինը մայիսի 24-ին Բաթումի գնացքով վերադարձաւ Թիֆլիս հիւսիսային Կովկաս արած իր ուղեւորութիւնից։

—

Տօնի պատճառով երեկ լոյս չը տեսաւ «Մշակի» համարը։

—

Ստացանք հայ ժողովրդական «Պաղ Աղբրի մօտ» երգը, նօտագրած դաշնամուրի և երգեցողութեան համար։ Երգը նօտագրված է այն եղանակից, որ երգում է երգիչ Ա. Կոստանեան։ Ներդաշնակել է մեր Թիֆլիսցիներին յայտնի երաժշտագէտ Տրուֆֆի։ Երգը պահպանել է ժողովրդական հարազատութիւնը և ենթարկվել է երաժշտական հմուտ մշակութեան։ Հիմնական տօնը վերցրած է աշուղ Տպագրված է Պետերբուրգում, գինն է 60 կ. ծախվում է Թիֆլիսում, Բագուում և Շուշում։

—

Ցենզուրական օրէնքների 121 յօդուածի հիման վրա, Թիֆլիսում անցեալ տարիները հրատարակվող „Аргонавтъ“ լրագիրը, որի հրատարակիչն էր ազնուական Իվան Տիօրժեվսկին՝ դադարեց։ Իսկ օրէնքի յիշված յօդուածը հետեւեալն է. «ամեն մի պարբերական հրատարակութիւն, որը մի որ և է պատճառով՝ մի ամբողջ տարի լոյս չէ տեսնում, համարվում է դադարած. նրան նորից հրատարակելու համար պէտք է նոր թոյլտուութիւն խնդրել։

—

Կովկասեան բժշկական ընդհանուր վարչութեան ծախք 1904 թւի համար նշանակված է 401,431 ռ։ Այդ գումարը բաժանվում է հետեւեալ ձեւով. 1) գիւղական-բժշկական մասի համար (դեռ ևս հին ռոճիկներով) 214,905 ռ., 2) Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի և նրա մէջ գտնված դեղատան, կանանց հոգեկան հիւանդների բաժանմունքի, նոյնպէս և շէնքի վերանորոգութեան համար՝ 95,478 ռուբլի, 3) գժանոցների պահպանութեան (Թիֆլիսում, Բագուի մէջ և Քութայիսում) և նրանց վերաշինութեան համար 47,476 ռ., 4) Օլգինսկի ծննդաբերական ինստիտուտի և գինեկոլոգիական բաժնի պահպանութեան համար՝ 28,959 ռ., 5) ծաղիկ կորողներին՝—9,420 ռ., 6) Թիֆլիսում Կովկասի համար կենդանական ծաղկի շիջուկ պատրաստելու հիմնարկութեանը՝ 3,333 ռ., 7) զինուորական վարչութեանը նպաստ 1500 ռ. Թիֆլիսում ջրգողութեան դէմ պաստէօրեան հիմնարկութիւն պահպանելու համար և 8) քաղաքացիական ծառայողների զինուորական հաստատութիւններում բժշկվելու համար վարձատրութիւն՝—400 ռ.։

—

Կանանց գիւղատնտեսական կրթութեան օժանդակող ընկերութիւնը, ինչպէս ասում է „Торг. Пром. газ.“, հիմնարկում է կանանց գիւղատնտեսական կուրսեր ընդհանուր միջնակարգ կրթութիւն ստացած անձերի համար։ Կուրսերի դասընթացը տեւելու է 2 տարի. ձմեռվայ ընթացքում կուրսերը տեղաւորված են լինելու Պետերբուրգի Տենիշեան դպրոցի շէնքում, իսկ ամառը՝ Բեռանի նահանգում, պետական Պեսօչինեան կալուածքում։ Կուրսերը բացվում են ներկայ տարվայ սեպտեմբերի 1-ից, և երկրագործական մինիստրութիւնը տալիս է առաջին տարին նպաստ 2,500 ռուբլի։

—

Երգիչ Ա. Կոստանեան, որ վերջին ձմեռվայ ընթացքում երգում էր Մոսկվայում, առաջիկայ ձմեռ էլ մինչև Մեծ-պասը պէտք է երգէ Մոսկվայում. իսկ Մեծ-պասին հրաւիրված է Բագու երգելու օպերային խմբում։ Ներկայ ամառ Կոստանեան կերգէ հանքային ջրերում։

—

Մնցեալ օրը մենք մի լուր էինք վերցրել „Приазов. Край“ լրագրից Իոանն Կրօնշտադտի հռչակաւոր ռուս քահանայի մահվան մասին, բայց յետոյ նոյն լրագիրը հերքում է այդ լուրը, բացատրելով այդպիսի խոշոր թիւրիմացութիւնը նրանով, որ Պետերբուրգից ստացված հեռագիրներն իրար են խառնվել և մի ուրիշ անձի մահը միացվել է հայր Իոաննի ամարանոց գնալու լուրի սկզբի տողի հետ։

—

ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Մեզանում և Վերին-Ագուլիսում ահա երկու շաբաթ է, ինչ երևացել է որովայնային տիֆ կոչված տարափոխիկ հիւանդութիւնը։ Ներքին-Ագուլիսը արդէն տուել է մէկ զոհ, բժշկին չը դիմելու պատճառով։ Վերին-Ագուլիսում այժմ կան մի քանի ընտանիքներ այդ հիւանդութեամբ բռնված։ Շնորհիւ երիտասարդ պ. բժ. Ա. Աբեանցի և նորաւարտ պ. բժ. Աթաբէկեանցի գործադրած եռանդուն ջանքերի, յոյս կայ, որ նոր մուտք գործած տիֆը շատ լայն ծաւալ չընդունի։ Բայց ցաւալի է, որ մի քանիսները, այն էլ «մեծամեծներից», ճշդութեամբ չեն կատարում բժշկի տուած պատուէրները և իրանց տգիտութեամբ ու ժլատութեամբ շատ անգամ անախորժ խօսակցութիւնների ու վիճաբանութիւնների են բռնվում բժշկի հետ։ Տասնեակ սենեակներից մեր ժլատ հարուստը խնայում է առանձին սենեակ յատկացնել հիւանդի, մարդ վարձել նրան միշտ խնամելու—պահպանելու համար։ Գիւղի բնակիչները գործածութեան համար ջուրը վերցնում են աղբիւրներից, որոնք կարող են շատ հեշտութեամբ վարակման պատճառ ծառայել, և մեր ժլատ-հարուստը, խնայելով ու գերադասելով իր մի կոպէկը հասարակական առողջութիւնից, աւելորդ է համարում 45—50 կոպէկ «ախտահանութեան նիւթ» դնել արտաքնոցները ախտահանութեան ենթարկելու։ Ժլատութեան զազրելի միջոցների դիմել, փող խնայել հիւանդի բժշկութեան դէպքում, որը դեռ հարազատ ընտանիքի անդամ է, դա կատարեալ հրէշութիւն է»։

—

ԴԱՂԵԹԻՑ մեզ հաղորդում են. «Եղանակների անձրևային լինելու պատճառով, այս տարի գիւղացիները աւելի ուշ սկսեցին դաշտային աշխատանքները և նոյն իսկ այժմ անգործ են անձրևի պատճառով։ Մայիսի 20-ին, երեկոյեան 6 ժամին սկսվեց կատաղի քամի, որը տևեց մի քանի րոպէ, երկինքը մթնեց ամպերով և սկսվեց յորդ անձրև. փոքր յետոյ անձրևին խառնվեց կարկուտ (մանր հատիկաւոր) և տևեց կէս ժամից աւելի։ Ամեն մի փողոցով ահագին առու էր հոսում։ Միւս օրը իմացվեց, որ փչացել են գիւղի արտերի մի մասը և այգիները. նոյնպէս և մօտակայ Շամշուլդա գիւղի այգիները։ Բայց արտերի մնացած մասը շատ լաւ է և առատ պտղաբերութիւն է խոստանում, եթէ միայն այսուհետև անվնաս մնայ»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մայիսի 16-ին տեղիս հայ-կաթոլիկ եկեղեցում, պատարագից յետոյ, հոգեհանգիստ կատարեցին կաթոլիկների Կ. Պոլսի պատրիարք Էմմանուէլեանի համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Պօրտ-Արտուրի վիճակի եւ առման մասին տեղեկութիւններ։ Լօնդօնից հեռագրում են «Times» լրագրին, թէ Պօրտ-Արտուրի նաւահանգստի մուտքը առաջվայ պէս ազատ է, որովհետև այդ մուտքը փակող շոգենաւերը հեռացրված են։ Ենթադրում են, որ Պօրտ-Արտուրում պատրաստի պաշար կարող է բաւականանալ քաղաքին միայն 5 ամիս։ Հաւանօրէն, Դալնին յենակէտ կը դառնայ եապօնական նաւատորմի գործողութիւնների համար։ Եապօնացիները գրաւել են մի քանի շոգեշարժներ և երկաթուղու հինգ վագոններ և այդպիսով շուտով կը վերականգնեն երկաթուղային հաղորդակցութիւնը թերակղզու վրա։ (Т. А.)

—Տոկիօից հեռագրում են «Daily Telégraph» լրագրին. «Այստեղ ենթադրում են, որ Ցզինչժօուի կռիւն մասնակցել են մօտ 20 հազար ռուսներ, որոնք Դալնիի պահակազօրքի 10 հազար նաւաստիների հետ միասին կազմում են Պօրտ-Արտուրի 30,000 պահակազօրքը։ Այդպիսով, Պօրտ-Արտուրը պաշտպանված է շատ նշանաւոր ոյժերով և նրան վերցնելը գրոհ տալով շատ դժուար բան կը լինի։ Պէտք է աւելացնել, որ ծովի կողմից բերդը պաշտպանված է քանից աւելի զօրեղ մարտկոցներով, որոնք պատսպարում են քաղաքը 15 մղոն տարածութեամբ տեղ։ Այնու ամենայնիւ եապօնացիները չեն կասկածում, որ կարող են գլուխ բերել այդ հոյակապ ձեռնարկութիւնը և ծանր հարուած հասցնել Ռուսաստանին. այդ հարուածը իր նշանակութիւնը կը պահպանէ եթէ նոյն իսկ գեներալ Կուրոպատկինին աջողվի գերազանցութիւն ունենալ Մուկդէնի և Գիրինի մօտ։ (Т. А.)

—Բերլինի լրագիրները հաղորդում են, որ վերջին օրերը պատերազմական գործողու-

թիւնների բեմի վրա թագաւորող հանգստութիւնը նման է փոթորկից առաջ եղած հանգստութեան։ «Local Anzeiger» ցոյց է տալիս, որ եապօնացիները անկասկած վճռել են հասնել Պօրտ-Արթուրի նաւակայանում գտնվող էսկադրային, որքան զոհ էլ որ իրանց նստի այդ բանը։ Սակայն, ինչպէս նկատում է մի զինուորական, այդպիսի ձեռնարկութեան համար բաւական չէ միայն հերոսութիւն և արհամարհանք դէպի մահը։ Դրա համար հարկաւոր է գլխաւորապէս ամրոցների դէմ ծանր թնդանօթներ դնել։ Վերջինը կարող է տեղի ունենալ այս օրերս, ուստի պէտք է սպասել զարհուրելի ռմբակոծութեան, որի հետևանքներից կախված կը լինի և գրոհ տալով յարձակման բոպէն։ (T. A.)

—«Daily Chronicle» թերթի թղթակիցը Տօկիօից հեռագրում է, որ յունիսի 2-ին (15-ին) եապօնացիները նշանակել են Պօրտ-Արթուրի վրա գրոհ տալու (շտուրմ) սկիզբը։ Լրագիրների թղթակիցները կուղարկվեն Տօկիօից Կվանդունեան թերակղզին մայիսի 28-ին (յունիսի 10-ին) որպէս զի նրանց հնարաւորութիւն տրվի ներկայ լինելու բերդի առման, որը, իբր թէ պէտք է տեղի ունենայ յունիսի 8-ին (21)-ին։ Եապօնացիները հրատարակել են իրանց ապագայ պատերազմական գործողութիւնների ծրագիրը։ Այնքան վստահ են եապօնացիները, թէ Պօրտ-Արթուրը կառնեն, որ մի եապօնացի արդէն վարձել է մի շոգենաւ Զիֆուում բերդին պաշար հասցնելու նրա առմանից յետոյ։ Տեսնենք։ (Новости)

«Daily Express» լրագրի թղթակիցը հեռագրում է, որ Պօրտ-Արթուրից վեց մղոն հեռու ճակատամարտ է տեղի ունեցել և ապա աւելացնում է. «Զիֆուից եկած լուրերը առիթ են տալիս ենթադրելու, որ նոր ճակատամարտ Պօրտ-Արթուրի մօտ տեղի կունենայ վաղը, հինգշաբթի»։ Իսկ «Indep. Belge» լրագիրը հաղորդում է, որ եապօնացիները Պօրտ-Արթուրի առման վրա որոշել են գործ դնել երկու շաբաթ։ (Н. Д.)։

—Բերլինի, ինչպէս և Լօնդօնի զինուորական շրջանների կարծիքները Պօրտ-Արթուրի գրոհ տալով առման հնարաւորութեան մասին հակասական են։ Այն կարծիքն է յայտնվում, որ առումը հնարաւոր է միայն, եթէ յարձակվողները 100,000 հոգի լինեն և 30,000 զոհ տան։ Ասիայի գիտակ Բրանտը գրում է «Vos. Zeitung» լրագրի մէջ, որ եապօնացիները պէտք է խոյս տան բերդի վրա գրոհ տալուց, որովհետև ժայռերը անյաղթելի դժուարութիւններ են ներկայացնում։ Անկասկած, նրանք կը փորձեն առաջ կենտրօնացրած հրաձգութեամբ ծանր գործիքներից հետզհետէ աւերել քաղաքի և նաւահանգստի վրա տիրապետող երկու մարտկոցները և ապա գրոհ տալով առնել բերդը, որի ժամանակ, ի հարկէ, ահագին կորուստներ կունենան։ Մի այլ զինուորական քննադատ գրում է. «Պատերազմ վարելու ժամանակակից առողջ թէօրիան յայտնում է, որ պէտք է առաջ խորտակել թշնամու դաշտային բանակը և միայն յետոյ սկսել պաշարումները։ (Рус. Вѣд.)։

Եապօնական եւ ռուսական զօրքերի թիւը։ «Temps» լրագրի ասելով, պատերազմական գործողութիւնների բեմի վրա գտնվող և գործող եապօնական երեք բանակները ամենաքիչը 200,000 հոգի են ներկայացնում։ Դժուար է ասել, թէ որքան կը լինի չորրորդ բանակի թիւը, այն բանակի, որ պատրաստվում է դուրս գալ Դագուշանից։ Ռուսները պէտք է 200,000-ից աւելի զօրք ունենան Բայկալի միւս կողմում, բայց դրանից 28 հազարը սահմանված է երկաթուղու պաշտպանութեան համար, իսկ 40 հազարը՝ պահակազօրքեր են կազմում։ Մի դիվիզիա գտնվում է Վլադիվոստոկում և հիւսիս-արևելեան Կորէայում։ Գեներալ Միշչենկոի և Ռենենկամպֆի կօզակային դիվիզիաները գտնվում են Եապօնական առաջին բանակի թևերի վրա։ Այդպիսով գեներալ Կուրօպատկինը իր ձեռքի տակ ունի մօտ 120,000 զօրք։ (Бирж. Вѣд.)։

Ռուսական զօրքի օրական ծախքը։ Պետական գանձարանի տուած տեղեկութիւններով, ռուսաց զօրքերի պահպանութիւնը Հեռաւոր-Արևելքում նստում է օրեկան 1,900,000 բուբլի, իսկ պատերազմի արժողութիւնը մի տարվայ ընթացքում հաշուում են 700 միլիոն բուբլի։ (P. Л.)։

Գենեռալ Կուրոպատկինը գնում է Պօրտ-Արթուրի օգնութեան։ «Matin» լրագիրը հաղորդում է, որ գեներալ Կուրոպատկինը 80,000 զօրքով գնում է ազատելու Պօրտ-Արթուրը, թողնելով Լեաօեանում բաւական ոյժեր հաղորդակցական գծի պաշտպանութեան համար. Այդ տեղեկութիւնը հաստատում է և «Journal լրագիրը, որի թղթակիցը ասում է, թէ իբր ռուսաց առաջապահ զօրքը գտնվում է Ցզինչժօուից 60 կիլոմէտրի վրա։ (P. Л.)։

Լուրեր ռուս-գերմանական համաձայնութեան մասին։ «Daily Telegraph» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաւատացնում է, որ նրան աջողվել է իմանալ «արժանահաւատ աղբիւրից», որ իբր Ռուսաստանի և Գերմանիայի մէջ կայացել է համաձայնութիւն, որով Ռուսաստանը ապահովել է իր համար Գերմանիայի եռանդուն գործակցութիւնը և, հարկաւոր դէպքում, նոյն իսկ զինաւորված միջամտութիւնը՝ Անգլիայի և Միացեալ-Նահանգների որ և է փորձերի դէմ՝ ենթարկել արևելեան-ասիական ճգնաժամը միջազգային կօնգրէսի քննութեան։ (Новости.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Բօսֆորի ափերից» Խան-զադէն գրում է «Новое Обозрѣніе» լրագրին. «Հայ ապստամբները ունեցել են առայժմ երեք ընդհարումն թիւրքական զօրքերի հետ։ Ամենալուրջ և ամենազարհուրելին, իր հետևանքներով, ընդհարումը տեղի ունեցաւ Մուշի մօտ, Յունան գիւղում, որը հիմնվին աւերված է։ Գործը այսպէս էր, եթէ հաւատանք արտասահմանեան աղբիւրներին։ Ոստիկանական պաշտօնեաները շրջում էին Մուշի վիլայէթի գիւղերում և հաւաքում էին հարկերը։ Իմանալով, որ յիշեալ գիւղում թաղված են մի քանի կասկածելի անձինք, նրանք անմիջապէս գնացին այդտեղ և սկսեցին խուզարկել գիւղական խրճիթները։ Նրանց օգնութեան եկան Մուշից զօրքեր։ Սկսվեց սաստիկ հրացանաձգութիւն։ Գիւղի բնակիչները փախան շրջակաները, թողնելով իրանց ամբողջ գոյքը։ Քիւրդերը, օգուտ քաղելով յարմար վայրկեանից, և սովորած լինելով ապրել ուրիշի հաշուով, կողոպտեցին գրեթէ բոլոր շինական հիւղերը, գործեցին ամեն տեսակ բռնութիւններ գիւղում մնացած բնակիչների վրա։ Թիւրքաց տեղական իշխանութիւնների տրամադրութեան մէջ փոփոխութիւն առաջ եկաւ. նրանք, թողնելով խաղաղասէր քաղաքականութիւնը, մտածեցին աւերել բոլորովին բարձրութիւնների վրա գտնված գիւղերը։ Այդ նպատակով, ինչպէս անցեալ անգամ հաղորդեցինք, ուղարկվում են Սասուն զօրքեր և նոյն իսկ թնդանօթներ։ Եթէ հաւատանք պատող լուրերին, գիւղացիներին առաջարկվեց տեղափոխվել դաշտի գիւղերը, եթէ միայն նրանք համերաշխ չեն ապստամբների հետ և ցանկանում են փրկել իրանց կեանքը։ Այդպէս է առ այժմ տեղական իշխանութիւնների պլանը։ Ինչպէս կը նայեն դրա վրա թիւրքաց բարձր շրջաններում, այսինքն Ելդըզում—անյայտ է։ Հիմք կայ ենթադրելու, որ սուլթանը հաւանութիւն չի տայ այդ ծրագրին, որովհետև եւրօպական պետութիւնների ներկայացուցիչները լաւ ծանօթ են ընթացիկ դէպքերին և ամենևին տրամադիր չեն որ և է բէպրէսսիվ միջոցներ գործադրել։ Յունան գիւղի ընդհարման առիթով եւրօպական ամբողջ մամուլը աղմուկ բարձրացրեց։ Գումարվում են միտինգներ Լօնդօնում, որոնց մասնակցում են եւրօպական շատ պետութիւնների դիպլօմատներ և գրականագէտներ։ Այդ միտինգների նպատակը—ինչքան մեզ յայտնի է—սերտ կապ հաստատել հայկական և մակեդօնական հարցերի մէջ։ Նորերս մի միտինգ գումարվեց նոյնպէս Ալէքսանդրիայում, որ երկու նպատակ ունի. 1) ներկայացնել քրիստոնեաների եղկելի դրութեան պատկերը օսմանեան կայսրութեան սահմաններում, 2) զինաւորել հասարակական կարծիքը Եւրօպայում թիւրքական կարգերի դէմ։ Կաիրօում ապրող հայերը ցանկանում էին նոյնպէս այդ նպատակով գումարել բազմաժարդ միտինգ, բայց եգիպտական իշխանութիւնները թոյլ չը տուեցին։ Այդ հանգամանքը սենսացիա առաջ բերեց Եգիպտոսի ամբողջ տարածութեան վրա։ Թէ ինչով իսկապէս զեկավարվել են եգիպտական իշխանութիւնները—անյայտ է։ Անկասկած է, որ արտասահմանեան հայերի ագիտացիան չէ մնում առանց հակազդեցութեան հայ ապստամբների տրամադրութեան վրա։ Մօտ ապագան յղի է շատ ծանր բարդութիւններով»։

—«Frankf. Zeitung» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ սուլթանի կեանքի դէմ նրա փեսայ Նուրէդդին փաշայի ձեռքով դաւադրութիւն սարքելու գործի քննութիւնը դեռ չէ վերջացած։ Թէ Նուրէդդին փաշան և թէ նրա դաւադիր միւս ընկերները ձերբակալված են Ելդըզ-Քիոսկում։ Քննութիւնը հաստատեց, որ դաւադրութեան մասնակից է և Մուրադի աղջիկը։

—Ինչպէս հաղորդում են «Polit. Corresp.» լրագրին Կ. Պոլսից, ռուսական քաղաքացիական գործակալ Դեմերիկը վատառողջութեան պատճառով պէտք է շուտով արձակուրդ գնայ 3—4 ամիս։ Նրա բացակայութեան ժամանակ նրա պաշտօնը պէտք է կատարէ Սալոնիկի ընդհանուր հիւպատոս Գիրսը։

—Կոպենհագում մայիսի 15/28-ին բացվեց երկրորդ միջազգային կօնգրէսը թոքախտի դէմ կուռելու միջոցների մշակման համար։ Բացման հանդէսին ներկայ էին, դանիական գահաժառանգը, դանիական պրինցներ՝ Վալդեմարը և Խրիստիանը, դիպլօմատիական մարմինը, պարլամենտի նախագահական բիւրօն և ուրիշ նշանաւոր անձինք։ Մինիստր-նախագահը ողջունեց կօնգրէսի անդամներին կառաւարութեան անունով։ Դրանից յետոյ կօնգրէսի նախագահ ընտրվեց պրօֆէսօր Բրուարդէլ, Պարիզից, որ արտասանեց մի ճառ, գովասանքով խօսելով Դանիայի մասին՝ տուբերկուլօզի դէմ աջողութեամբ կուռելու համար։

—Հայերը Թիւրքիայում վերնագրով, «Temps» լրագիրը մի յօդուած է տպել, որի մէջ ասում է, թէ թիւրքաց կառավարութիւնը որոշել է տեղափոխել լեռնային տեղերում ապրող հայերին դաշտերի վրա։ Թիւրքաց կառավարութիւնը գտնում է, որ այդ միակ միջոցն է ապահովել թիւրք ժողովրդին հայերի յարձակումներից, որոնք յետոյ թաքվում են սարերում և անտառներում (°)։ Հայերը ամեն տեսակ դիմադրում են այդ ծրագրին, հասկանալով, որ նրա իրագործումը կը ձգի իրանց ամբողջովին քիւրդերի ձեռքը։ (Нов. Вр.)

—«Frank. Zeltung» լրագիրը հաղորդում է, որ Սասունի շրջանում գործերը աւելի ծանր են, քան առաջ կարծվում էր։ Մուշ են բերվել աւերված և այրված գիւղերից մօտ 200 պառաւ կանանց. մնացած ժողովուրդը, որ չը կարողացաւ փախչել սարերը, կոտորվեց տեղում։ Մուշ բերված կանայք պէտք է ծառայէին իբրև ապացոյց, որ ոչ մի ջարդ չէ եղել և թուրքերը գերիներին չեն սպանել։ Հայ եպիսկոպոսներին և Մուշից եկած ականաւոր հայերին, որոնք ուղեկցում էին զօրքին, ստիպեցին ստորագրել երախտագիտական ուղերձ սուլթանին, իսկ յետոյ նրանց հեռացրին գործողութիւնների տեղից, որպէս զի նրանք կոտորածին ականատես չը լինեն։ Մուշի մէջ սարսափ է տիրում։ Ինչ վերաբերում է ապստամբների դրութեան անառիկ լեռնային դիրքերում, գերմանական լրագիրը հաղորդում է, որ նրանք յաղթական կերպով յետ մղեցին տասը բատալիոն թիւրքաց զօրքերի երեք յարձակումները։ Թիւրքերը կորցրին շատ սպանվածներ և վիրաւորվածներ և ի վրէժխնդրութիւն այրեցին դեռ 5 գիւղ։ Վերջին տեղեկութիւնները Սասունում մեծ տպաւորութիւն են թողնում։ Ֆրանսիական պարլամենտում պատրաստվում է այդ առիթով հարցապնդումն, որ պէտք է անել Պրեսանսէ պատգամաւորը արտաքին գործերի մինիստրին։ (Рус. Вѣд.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Մեծութեանը, մայիսի 22-ից. «Ստացված զեկուցումների համաձայն Վաֆանգօուի մօտ եղած գործի մանրամասնութիւնները հետևեալ ձևով են ներկայանում. մեր հեծելազօրը՝ կազմված դրագունների, կազակների, կամաւորների և բատարէյից, Վանձեալինից գալով մայիսի 18-ի կէս օրի մօտերը, Վաֆանգօու կայարանին 5 վերստ մնացած, զեկուցում ստացաւ, որ երկու սահմանապահ հարիւրակներ հրացանաձգութիւն են անում թշնամու հետ, որ դիրք է բռնել Իւձատուն գիւղի մօտ։ Հեծելազօրը ձիերը քշելով մօտեցաւ Սաֆանգօուին և սահմանապահներին օգնելու համար ուղարկեցին դրագունների 2 էսկադրօն։ Իր աջ թևի պաշտպանութեան և խուզարկութիւնների համար զօրքից բաժանեցին մի հարիւրակ և կամաւորների մի խումբ դէպի Ցուչժօու գետի հովիտը, որոնք իրանց գործը վերջացնելով, կազմեցին մեր դիրքի աջ թևը։ Կէս օրվայ ժամը 1-ի մօտերը հակառակորդը մեծ ուժերով սկսեց դուրս գալ Իւձատունից մեր առաջատար գծերի վրա գրոհ տալու նպատակով. այն ժամանակ սիբիրեան կազակների 2 հարիւրակ, երկաթուղին անցնելով ձիաւոր շարքերով, գրոհ տուին եապօնական առաջապահ էսկադրօնի վրա և ձեռնամարտի մէջ նրանց համարեա բոլորին ոչնչացրին։ Յետոյ ձիերից վայր իջած երկու էսկադրօն հետևակների ու գնդաձիգների կրակին հանդիպելով, կազակները, դէպի ձախ քաշվելով, իրանց ետևից ընկած 2-դ էսկադրօնին քաշ տուին դէպի կամաւորների խումբը որը կարողացաւ ուժ մահամուռ հարուած տալ՝ նշան առնելով և էսկադրօնը յետ դարձաւ, կրելով զգալի վնասներ։ Եապօնական երկրորդ էսկադրօնն ընկաւ սահմանապահ հարիւրակի կրակի տակ և նոյն պէս նահանջեց։ Մեր ձախ թևի վրա այդ ժամանակ ձիերից վայր իջած դրագունները, որոնք տեղական պայմանների պատճառով չէին կարող գործին մասնակցել ձիերի վրա հեծած, Իւձատունից հիւսիս եղած բարձունքների վրա հրացանաձգութիւն էին անում թշնամու հետ և, նկատելով նրա ձախ կողմից դէպի մեր ետևն անցնելու շարժումը, քաշվեցին երկրորդ դիրքի վրա, դրանով լիապէս ապահովեցնելով կազակների գործողութիւնը։ Կէսօրվայ ժամը 1½-ի մօտերը մեր բատարէան դիրք բռնեց և աջող կրակ բացեց թշնամու հետևակի և գնդաձիգների վրա։ Այդ ժամանակ նշմարվեց եապօնացիների շարժումը դէպի Իւձատուն։ Յետոյ ժամը 2-ի մօտերը հետևակների խիտ շղթաները երևացին առաջ դրագունների բռնած բարձունքների կատարների վրա։ Մեր կորուստներն են. ծանր վիրաւորված է պօրուչիկ ֆօն-Մէյերը, թեթև՝ պօդպօրուչիկ Բրանդը, զինուորներ սպանված են 3, ծանր վիրաւորված՝ 9 և թեթև՝ 23։ Եապօնացիների կորուստները նշանաւոր են։ Եապօնական սպանված ունտէր-օֆիցէրի վրա գտնված զեկուցագրից երևում է, որ միայն 14-դ գրագունեան գունդը կորցել է 70 մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Մեծութեան, մայիսի 23-ից. «Մայիսի 21-ին մեր կօզակները հանդիպեցին թշնամու հետևակի կրակին. այդ հետևակը բռնել էր ամրացրած դիրք Խօցգեապուձու գիւղի մօտը բարձունքների վրա։ Գործի սկզբում եապօնացիները փորձեցին սկսել յարձակողական շարժումը Կօուլէնձիխօ գետի հովիտով, բայց նրանց կանգնեցրեց ձիանների վրայի թնդանօթների աջող կրակը. կօզակները կարողացան շտապով դիրքերի վրա դնել այդ թնդանօթները։ Կօզակները ձիերից իջան։ Եկած օժանդակների և ուրիշ թնդանօթների կրակի օգնութիւնով կօզակներն ստիպեցին եապօնացիներին դիրքերը թողնել և նահանջել՝ խտացած մասերի պաշտպանութեան տակ. գնդակաձգութիւնը շարունակվեց ժամը 1-ից մինչև 6-ը։ Եապօնացիների կողմից մասնակցում էին գնդակաձգութեանը 6 վաշտ, որոնցից 4-ը աւելի ուշ մօտեցան ամրութիւններին։ Թշնամու փոսերը շատ խնամքով էին շինված և շատ լաւ դիմակաւորված էին։ Մեր ձիաւոր թնդանօթները շատ լաւ էին գործում։ Գործի աջողութեանը նպաստեց գլխաւորապէս նրանց կրակը։ Մեր կորուստներն են. սպանված է Ստարկով կորիճ զօրքերի աւագը և թեթև վիրաւորված են 2 օֆիցէր. 11 կօզակ վիրաւորված են և 2-ը քերծվածքներ են ստացել։ Եապօնացիների կորուստները ճիշտ յայտնի չեն, բայց մերիններից նշանաւոր են։»—Գեներալ Ժիլինսկու հեռագիրը զինուորական մինիստրին մայիսի 21-ից. «Գեներալ Ստեսսելից ստացած դրաւոր զեկուցումների համաձայն, որ լրացնում են նրա մինչև մայիսի 8-ի հեռագիրները, երևում է, որ այդ թվին գործերի դրութիւնը հետևեալն էր. եապօնացիների բանակը յարձակվել էր Ցզինչժօու քաղաքի վրա, որ գրաւված էր մի վաշտով։ Թշնամին արդէն գրաւել էր Կէրը թերակղզին և ուղարկել էր մեծ շալանդներ Խունուէզա ծովախորշը, որոնք սակայն ստիպված էին հեռանալ մեր թնդանօթների կրակի պատճառով։ Մեր զօրքերը դիրք էին բռնել Խունուէզա ծոցի ափից, Տալիէնվանից, Նանգուանլին կայարանից, Դալնիից և բոլոր ծոցերից աւելի հարաւ։ Թշնամու էսկադրան շրջափակել էր ամբողջ ծովափը և գնդակահարում էր երբեմն մէկ, երբեմն միւս ծովախորշերի ափերը, չը խնայելով ռումբերին։ Մայիսի լոյս 7-ի գիշերը տեղի ունեցաւ Պօրտ-Արթուրի մի փոքրիկ ռմբակոծութիւն, որի ժամանակ սպանվեցին 1 զինուոր և 2 ձի, վիրաւորվել են 4 զինուոր։ Մայիսի 1-ին եապօնացիները փորձեցին Կէրը ծովախորշում զօրք ափ իջեցնել, բայց յետ մղվեցին։ Թշնամու մի կրէյսէր ընկղմվել է։ Մայիսի 2-ին նրանց զօրասիները երկու ճանապարհով Սանշիլիպուից և Գօցզեալինից դիմեցին դէպի հարաւ։ Եապօնացիները գնում էին խիտ խմբերով և դրա համար էլ թնդանօթի կրակից մեծ կորուստներ ունեցան։ Գենցզեալինից եկող նրանց զօրասիւնը ընկաւ մեր հետևակի կրակի բերանը և նոյնպէս սաստիկ ջնջվեց։ Երբ թշնամին տարածվեց, երևաց որ նա ունի 6 բատարէա և 24 բատալիոն։ Թշնամու ուժերի մեծ առաւելութեան պատճառով մեր զօրքն սկսեց յետ նահանջել։ Եապօնացիները առաջխաղացութիւնը դադարեցրին։ Գեներալ Ստեսսելը մեծ գովեստով է խօսում այդ գործում մասնակցող մեր զօրքերի և զօրապետների կորիճութեան մասին։ Մայիսի 4-ի առաւօտեան մեր զօրքերը գրաւեցին Ցզինչժօու քաղաքի հիւսիսում եղած բարձունքները կօզակներով և կամաւորներով. թշնամու առանձնակի խմբեր երևացին լեռներում։ Մայիսի 5-ին եապօնական 3 վաշտ Սամսօնի արևմտեան լանջի վրա յարձակվեցին մեր կամաւորներից 100 հոգու վրա, բայց յետ մղվեցին։ Ունեցած տեղեկութիւնների համեմատ, Սանշիլիպուից հիւսիս գտնվում է թշնամու ամբողջ բանակը բաղկացած 30,000 հետևակից և 1500 հեծելներից պաշարման հրետանիներով։ Մեր զօրքերի ոգին գերազանց

է։ Մեր կորուստներն են մայիսի 1-ից մինչև 10-ը—10 օֆիցէր և 185 զինուոր։ Գերված եապօնացիների մօտ գտնվեցին ռուս-եապօնական թարգմաններ. երևում է, որ այդ զօրամասերը վաղուց նշանակված են եղել Պօրտ-Արտուրի դէմ։ Բառարաններում ամեն բան յարմարեցրված է Պօրտ-Արտուրին և Դալնիին»։

ՉԻՖՈՒ։ (Ռէյտէր)։ Դալնիի եապօնական թղթակիցը հաստատում է չինացիների զեկուցումը եապօնական առաջխաղացութեան մասին և ասում, որ նրանց բանակը գտնվում է Պօրտ-Արտուրից 15 մղոն հեռաւորութեան վրա։ Բանակը առաջ է գնում թերակղզու երկու ափերի երկարութիւնով։ Արևելեան կողմում գտնվող դիվիզիան ճակատամարտեց թշնամու հետ մայիսի 22-ին՝ Պօրտ-Արտուրից 15 մղոն հեռաւորութեան վրա։ Կուի արդիւնքն անյայտ է։—Պօրտ-Արտուրի մօտ կանգնած ջօնկայի վրա պայթիւններ չը լսեցին, ինչպէս յիշում են պաշտօնական զեկուցման մէջ, այլ լսեցին անկանոն հրացանաձգութիւն։ Մայիսի 22-ի առաւօտեան ջօնկայից նկատեցին 5 եապօնական հակա-ականնաւեր։ Երբ դրանք աչքից կորան, լսվեց մի ամենազօրեղ պայթիւն. շատ կարելի է, որ հակա-ականնաւերից մէկը հանդիպել է ականի։ Մայիսի 21-ի գիշերը Դալնիի կողմը երևում էին ահագին կրակէ սիւներ և թանձր ծուխ։ Ռուսական և եապօնական բանակներն իրարից միայն երկու վերստ տարածութիւնով էին բաժանված։—Մայիսի 20-ին եապօնական բանակը, ուժեղացրած նոր զօրքերով՝ որոնք ափ էին հանված Դալնիում, գրաւեցին Ցզինցզեատունը և Սանշիպօն, որ գտնվում են Դալնիից հարաւարևմուտք, իսկ յետոյ սկսեցին շարժվել դէպի Պօրտ-Արտուր արևելեան ափի երկարութիւնով։ Բանակի մի կողմում ձգված են բարձր լեռներ, իսկ միւս կողմից՝ ծովը, որտեղից եապօնական թնդանօթակիրները ցոյց են տալիս օժանդակութիւն ձախ թևին։ Մայիսի 20-ին եապօնացիները գտնվում էին Պօրտ-Արտուրի արտաքին մարտկոցներից 7 մղոն հեռաւորութեան և 2 մղոնի վրա ռուս բանակից, որը պատրաստ է դիմադրութեան։ Չինացիների կարծիքով, այդտեղ հաւանօրէն տեղի կունենայ լուրջ ճակատամարտ։ Շատ կարելի է, որ նա արդէն սկսվել է։ Եապօնացիներն արդէն տեղափոխել են իրանց հիմքը Դալնի և Տալիէնվան։ Մեծ նաւերը կանգնած են արտաքին նաւակայանում, իսկ աւելի փոքրները նաւահանգստի ներսում։ Դալնի իջնող զօրքերը գալիս են փոքր նաւերով հաւանօրէն Բիցզիվօից և Էլիօտի կղզիներից։ Չինացիները պատմում են, որ մի քանի չինացիներ գնդակահար եղան, երբ փորձում էին անցնել ռուսաց գծերով։—Ռուս հիւպատոսին հաղորդել են, որ եապօնական մի մեծ նաւ ընկղմվեց, զարնվելով ականի Տալիէնվանի մօտերը։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ (Ռէյտէր)։ Պետերբուրգում լուր է տարածվել, որ իբր թէ Միացեալ-Նահանգները քննում են Ֆիլիպպեան կղզիները Եապոնիային որոշ պայմաններով զիջանելու հնարաւորութեան հարցը։ Վաշինգտոնից եկած պաշտօնական հեռագրի և արտաքին գործերի մինիստրի յայտարարութեան հիման վրա այդ լուրը զուրկ է բոլոր հիմքերից։

ՏԵԱՆՑԶԻՆ։ (Ռէյտէր)։ Ռուսները դատարկեցին Սինմինտինը և նրա շրջակայքը, միանալով Մուկդէն գնացող զօրքերի հետ։—Առաւօտեան Լեաօեանի կողմերից Ինկօուում լսվում էր զօրեղ թնդանօթաձգութիւն։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտէր)։ Հրատարակված են ցամաքային զօրքերի և նաւատորմի բազմաթիւ օֆիցէրների աստիճանների բարձրացման կարգադրութիւնները։

ԿՈՒՐՍԿ։ Գիւղացիական բարենորոգումների խորհուրդը 10 նիստերում վերջացրեց առաջարկված հարցերի քննութիւնը և ցանկալի դատեց հողային համայնքներ կազմելը, գիւղախմբերի (վոլօստ) դատարանների պահպանութիւնը, նուազեցնելով նրանց իրաւասութեան չափը և նրանց վերաբերութեամբ գործադրելով ընդհանուր քաղաքացիական և քրէական օրէնքները և թեթևացնելով համայնականից անհատական տնտեսութեան անցնելը։—Աւելի մանրամասն մշակման համար ընտրված են 6 ենթակոմիսիաներ։

Կ. ՊՕԼԻՍ։ Մակեդոնական ժանդարմերիայի մէջ նշանակված ռուս օֆիցէրները մայիսի 21-ին ուղևորվեցին իրանց պաշտօնավայրերը Սալօնիկի սանջակում. դրանից մի քիչ առաջ ռուս գեներալ Շօստակը վերահսկեց իր շրջանը։

ՀՌՕՄ։ Պարիզի ռուսական դեսպանութեան խորհրդական Նարիշկինը նշանակված է մինիստր-ռեզիդէնտ Ս. Աթոռի մօտ։

ԲԱՐՑԵԼՕՆԱ։ Այն վայրկեանին, երբ նահանգապետն ուղում էր միանալ Քրիստոսի Մարմնի տօնի առիթով կազմված թափորին, որ գնում էր գլխաւոր փողոցով, տեղի ունեցաւ մի ռումբի պայթիւն, որը սակայն ոչ մի վնաս չը պատճառեց ներկայ եղողներին։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Ունգարական պատգամաւորութիւնն ամբողջովին ընդունեց զինուորական մինիստրութեան նախահաշիւը։ Վիճաբանութեան ժամանակ ֆէլդմարշալ-լէյտէնանտ Իսկալֆալուսսան յայտարարեց զինուորական մինիստրի անունից, որ արտակարգ վարկ յատկացնելու պահանջի մեծ մասը նպատակ ունի արտիլէրիայի վերանորոգութիւնը։ Հռետորը յարակցեց, որ ներկայումս նա դեռ հնար չունի պատասխաններ տալու նրա տրված մասնաւոր հարցերին, այնուամենայնիւ նա անհրաժեշտ է համարում յայտարարել, որ չը պէտք է զուգադրել անբարեյաջող մարքով զինուորական մինիստրի պահանջները արտաքին գործերի մինիստրի արտաքին դրութեան վերաբերեալ բացատրութիւնների հետ։ Պէտք է հնար ունենալ պատերազմական գործողութիւններ ծագած ժամանակը ոչ միայն պաշտպանվել այլ և առաջին ճակատամարտները տալ պետութեան սահմաններից դուրս և պահպանել գործերի այդ դրութիւնը պատերազմի ընթացքում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 23-ին Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ զօրահանդէս գրենադէրների հեծելազօրքի լէյբ-գվարդիայի և Նորին Մեծութեան Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի ուլանեան գնդերի։

25 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Рус. Инвалидъ» լրագրի մէջ տպված է մի ընդարձակ հաղորդագրութիւն պատերազմական գերիների դրութեան մասին ռուս-եապօնական պատերազմի մէջ։

ԼԵԱՕԵԱՆ։ («Ռէյտէր»)։ Օտարազգի գործակալները, որոնք գտնվում են ռուսաց գլխաւոր բանակատեղում, բնակեցրված են տների մէջ, որ դրված են նրանց կատարեալ տրամադրութեան ներքոյ։ Հայթայթելով նրանց ամեն տեսակ յարմարութիւններ, գեներալ Կուրոպատկինը հրաւիրում է նրանց իր սեղանին։ Մեծ Իշխան Բորիս Վլադիմիրովիչ, որ գրաւել է ընդհանուր համակրութիւն իր բաց բընաւորութեամբ և բարեհաճ վերաբերմունքով դէպի շրջապատողները, նոյնպէս յաճախ այցելում է օտարազգի ներկայացուցիչներին։ Պատերազմական գործակալներից շատերը, որոնց թւում և անգլիականը՝ մայոր Իւմ, թոյլտուութիւն ստացան հարաւ գնալ։ Գործակալներից ոմանք սպասում են թոյլտուութեան միանալ կօզակային զօրքերին, որոնք շփվում են եապօնական առաջապահերի հետ։ Լեաօեանի շուրջը հարթված են բազմաթիւ ճանապարհներ և բացված են նոր դներ քաղաքային պարսպում զօրքերի շարժումը թեթևացնելու համար։ Բնակիչների բարեկեցութիւնը բարգաւաճ է այն ահագին միջոցների պատճառով, որ ռուսները ծախսում են բանուորների, կենսական ուտեստների, սայլեր և զօրքերի համար կացարաններ վարձելու վրա։ Զօրքերի առողջութիւնը ընտիր է, նրանք լցված են հաւատով յաղթութեան մասին։ Ըստ երևոյթին, շուտով կը սկսվի յարձակողական շարժումը։ Էլի մի եապօնական բանակ իջնում է Լեաօդանի արևելեան ծովափի վրա, որպէս զի խափանէ ռուսների առաջխաղացութիւնը Դաշիցեաօից՝ դէպի Օկուի բանակի եաւի մասը։ Հաւանօրէն, եապօնացիները հրաժարվել են Լեաօեանի վրա յարձակվելու մտքից, եթէ առհասարակ այդպիսի ծրագիր ունէին նրանք։ Անձրևների շրջանը սպասվում է երկու երեք շաբաթից յետոյ և նա անհնարին կը դարձնէր առաջխաղացութիւնը։ Կօզակները շփվում են եապօնական առաջապահ կայանների հետ, իսկ բանակի միւս մասը հսկում է Կուրօկիի աջ թևի վրա։—Ռուսաց զօրքերի առողջական վիճակը հիանալի է, վարակիչ հիւանդութիւններ ամենևին չը կան, նկատվում են միայն հատ հատ դէպքեր ներքին հիւանդութիւնների։ Այստեղ պատում են յամառ լուրեր, որ ռուսները դուրս գալու աջող փորձ են արել Պօրտ-Արտուրից։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտէր»)։ Ռուսաց մանջուրական բանակի զինուորական գործակալներից մինը հեռագրել է Պետերբուրգ, որ գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինը շաբի ուղեկցութեամբ գնաց երկաթուղիով 60 վերստ տեղ Լեաօեանից դէպի հարաւ, Մայչէնի և Դաշիցիանի մէջ տեղ։—«Թայմսի» թղթակիցը հաղորդում է անթել հեռագրով, որ եապօնացիները մաքրում են Տալիէնվանի ծոցը ականներից, բայց աշխատութիւնները կատարվում են դանդաղ և մեծ վտանգ են ներկայացնում։ Եապօնացիները եկել են այն եզրակացութեան, որ եթէ նոյն իսկ նաւահանգստի մուտքը ազատվի, ռուսաց նաւերը հնարաւորութիւն չեն ունենայ դուրս գալ ծովը, Պօրտ-Արտուրում ածխի պակասութեան պատճառով։—Եապօնական բանակի մի մասը կը հսկէ Պօրտ-Արտուրի վրա, ցամաքից, մինչև որ Տալիէնվանի ամրոցի դրութիւնը թոյլ կը տայ դիմել նոր զօրքերի ափ իջմանն։

25 մայիսի

ԼՕՆԴՕՆ։ Հայաստանի մէջ տեղի ունեցած յուզմունքների մասին հարցապնդումին Պէրսի յայտնեց, որ թիւրքաց կառավարութիւնն ընդունեց առաջարկութիւնը, որի համաձայն Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հիւպատոսները պէտք է գործէին միատեղ որպէս միջնորդներ։ Անգլիական և ֆրանսիական հիւպատոսները արդէն մայիսի սկզբից գտնվում են Մուշում, սպասելով ռուսաց հիւպատոսի գալստեան, որը ուշացաւ Թիֆլիսում։ Հիւպատոսների համար բաւական դժուար է բանակցութիւններ վարել ապստամբ հրոսակախմբերի հետ, բայց եւրոպական ներկայացուցիչների ներկայութիւնն արդէն անկասկած լաւ ներգործութիւն է ունեցել։ Հիւպատոսներին հրահանգ է տրված ճաշ Մուշ, մինչև յեղափոխական շարժման անհնարին դարձնելը և մինչև պատերազմական նոր ձեռնարկութիւններ չեն պահանջվի։

ՊԿՐՄ։ Ճանապարհ ընկաւ պատերազմական գործողութիւնների բեմը գթութեան քոյրերի մի խումբ, որ կազմակերպել է Կարմիր Խաչի տեղական վարչութիւնը։

ԿՕՐՕՍՏԻՇԵՎ։ Մայիսի 25-ին կրակի ճաբակ դարձաւ Կիեվի նահանգի համարեա ամբողջ Կօրօստիշեվ աւանը. այրվեցին գիւղական շատ տներ։ Կային մարդկային զոհեր։ Աննկարագրելի է բնակիչների թշուառ դրութիւնը։ Խնդրում ենք օգնութիւն բարի մարդկանցից։ Նուիրատուութիւնները պէտք է ուղարկել կոմիտէին։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Մայիսի 24-ին հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը վերադարձաւ Լիստվէնիչնոէ պիւղը շուրջ-բայկալեան երկաթուղին քննելուց յետոյ։ Մտադրութիւն ունի Պետերբուրգ ուղևորվել յունիսի առաջին թւերին։

ՄՕՍԿՎԱ։ Բոլոր տաճարներում մաղթանքներ կատարվեցին Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի արևշատութեան համար։ Մայրաքաղաքը զարդարված է դրօշակներով։

ԲՐԷՄԷՆ։ Գերմանական «Հանզա» շոգենաւային ընկերութեան պատկանող «Խոխէյմէր» շոգենաւը ծախված է եապօնացիների վրա։

ԳԻԲՐԱԼՏԱՐ։ Անգլիական զրահակիրը ուղևորվում է Տանժէր։ Լուր կայ, որ ֆրանսիական միջերկրական էսկադրան նոյնպէս կերթայ այնտեղ։

ՍՕՖԻԱ։ Մակեդոնիայից ստացված տեղեկութիւնների համեմատ, թիւրքերը նորից գազանութիւններ են կատարում քրիստոնեայ ազգաբնակութեան դէմ Օխրիդում։ Սկսվեց սով։ Շատ մխիթարական են այն շրջաններից ստացվող լուրերը, ուր գործում է օտար ժանդարմերիան։ Մինչև անգամ այստեղի մակեդոնական շրջանները համաձայնվում են, որ ազգաբնակութեան դրութիւնը այնտեղ էապէս բարւոքվել է։

ՍԻՄԲԻՐՍԿ։ Նահանգապետի նախագահութեամբ խորհրդակցութիւն է սկված գիւղացիներին վերաբերեալ օրէնսդրութիւնները վերաքննելու մասին։

ՍՏԱՐԱՅԱ ՐՈՒՍՍԱ։ Մաղթանքից յետոյ բացվեց բուժական սէզոնը։

ՀՌՕՄ։ Նէապոլի ազգային թանգարանի դիրեկտոր Պախս արձակված է պաշտօնից՝ թանգարանի վարչութեան մէջ երևան եկած անկանոնութիւնների պատճառով։ Դրամական գումարների դէֆիցիտը հասնում է 300,000 լիրի։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ծովապետ Զէդվիկ զեկուցանում է, որ Մարօկկոի անգլիական դեսպանը միջնորդում է Լօնդօնում անգլիական պատերազմական նաւ Տանժէր ուղարկելու մասին, ուր սպասվում է սուլթանի դալը։

ԲԼԱԳՕՎԷՇՉԵՆՍԿ։ Տաճարում հանդիսաւոր մաղթանք կատարվեց ներկայութեամբ շրջանի հրամանատարի և զինուորական ու քաղաքացիական վարչութիւնների։ Բանակում կայացաւ զօրահանդէս։

ՎԻԵՆՆԱ։ Երցհերցոգ Ֆրիդրիխ շքախմբով ճանապարհ ընկաւ Լօնդոն։

26 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թւի մայիսի 24-ից. «Ֆինխուանչէնից այս կողմը փոփոխութիւններ չը կան։ Իւդզեատուն գիւղի մօտ, Վաֆանգօու կայարանից դէպի հարաւ դտնվող դիրքի վրա կանգնած եապօնական զօրաբաժինը մայիսի 22-ի ընթացքում մաքրեց դիրքը և հեռացաւ, հալածվելով մեր հեծելազօրքից դէպի Վաֆանդեան կայարանը և աւելի հեռու դէպի հարաւ։ Մայիսի 21-ին Սայմաղդիի շրջականերում խուզարկութեան ժամանակ մեր ետևակողմի զօրաբաժնի վրա կրակ բացեց եապօնական հետևակ զօրքը, բայց մերոնք առաջ շարժվելով կանգնեցրին հակառակորդի յարձակումը։ Հրաձգութիւնը շարունակվում էր մօտ մէկ ու կէս ժամ։ Մեր կորուստներն են՝ երկու սպանվածներ և 6 վիրաւորված զինուորներ»։

ՏՕԿԻՕ։ Ծովապետ Տօգօ զեկուցանում է. չը նայելով փոթորկալի ծովին, Տալիէնվանեան ծովածոցի մաքրումը շարունակվում է բաւարար կերպով. մայիսի 21-ից մինչև 24-ը գտնված և պայթեցրված են 41 ականներ։ Տափակ յատակ ունեցող նաւերի համար արդէն գտնված է ապահով ազատ ճանապարհ։ Դագուշանի մօտ ափ իջած եապօնական զօրքի մի մասը մայիսի 23-ին յարձակում գործեց կազակների զօրաբաժնի վրա Եանցզեատունի մօտ, դէպի Ցզինչժօու տանող ճանապարհի վրա, 10 կիլոմէտրի վրա դէպի հիւսիս-արևմուտք Դագուշանից։

ՉԻՖՈՒ։ («Ռէյտէր»)։ Եապօնացիներն ըստ երևոյթին մայիսի 24-ին գիշերը վճռողական փորձ արին յարձակում գործել Պօրտ-Արտուրի վրա ցամաքից։ Դալնիից երեք մղոն դէպի հարաւ գտնվող կէտից դուրս եկած ջօնկայից լսեցին թնդանօթաձգութիւն Պօրտ-Արտուրից դէպի հիւսիս առաւօտեան 7 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ, որից յետոյ ջօնկան արդէն գտնվում էր շատ հեռու տարածութեան վրա՝ թնդանօթաձգութիւնը լսելու համար։ Եապօնացիները, ըստ երևոյթին, դիտաւորութիւն ունէին յարձակում գործել Պօրտ-Արտուրի վրա միաժամանակ ցամաքից և ծովից. իսկ ռուսները, նկատելով այդ, ուղարկեցին էսկադրա, որպէս զի կռիւ սկսէ եապօնական նաւերի հետ, արգելելով նրանց աջակցութիւն ցոյց տալ պատերազմական ոյժերին ցամաքի վրա։ Այստեղ կարծում են, որ մայիսի 24-ին երեկոյեան տեղի է ունեցել ծովային պատերազմ Պէչիլեան ծոցում։ Եկած շոգենաւերից հաղորդում են, որ լսում էին սաստիկ թնդանօթաձգութիւն։ Նոյնպիսի տեղեկութիւններ ստացվում են ուրիշ աղբիւրներից։ Չիֆուի շրջականերում գտնվող բարձրութիւններից բնակիչները լսում էին թնդանօթաձգութիւն և տեսան բոցավառութիւններ ծովից։ Տալիէնվանում պատում է չը ստուգված մի լուր, որ «Եաշիմա» զրահակիրը դիպել է ականին և ջրասոյզ է եղել։

ՄՈՒԿԴԷՆ, մայիսի 25-ին։ (Սեփ. թղթակ.)։ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի ծննդեան օրվայ առիթով գլխաւոր բանակում մաղթանքից յետոյ կայացաւ զօրահանդէս։ Զօրահանդէսին ներկայ էին Դանիայի և Միացեալ-Նահանգների զինուորական գործակալները։

26 մայիսի

ԿԱԼԿՈՒՏԱ։ Այստեղից շուտով կարուլ է ուղևորվում անգլիական միսսիան, որովհետև աւղանական էմիրի գործունէութեան եղանակը անգոհացուցիչ է դարձել։ Ասում են, որ էմիրը հրաժարվեց այլ ևս ընդունել հնդկական կառավարութեան կողմից նրան նշանակված տարեկան դրամական սուբսիդիա։ Այդ և ուրիշ լուրջ հարցեր կը լինեն միսսիայի բանակցութիւնների առարկան էմիրի հետ։

ՍԻՄԼԱ։ («Ռէյտէր»)։ Տիբէցիները յարձակում գործեցին Կանգժայի մօտ գտնված կայանների վրա։ Անգլիացիները կորցրին մէկ սպանված և 5 մարդ վիրաւորվածներ։ Տիբէցիները 164 սպանվածներ թողին պատերազմի դաշտի վրա։

ՍԻՄԼԱ։ («Ռէյտէր»)։ Անգլիական արշաւախմբի յարձակման սկիզբը Լիասսայի վրա նշանակված է մայիսի 13-ին։

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանը դիտաւորութիւն ունի շնորհել աւստրիական կայսրին մի քանի տարի առաջ սահմանված օսմանեան արքայական տան շքանշանը, որը բացի թիւրք պրինցներից ունեն միայն գերմանական կայսրը և անգլիական թագաւորը։ Յունիսի երկրորդ կէսին Վիեննա կուղևորվի մի յատուկ միսսիան՝ յանձնելու կայսրին այդ շքանշանը։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Աֆրիկայի հարաւ-արևմուտք գտնվող գերմանական կալուածքները երկու շոգենաւերով ուղարկված են զօրքեր և ձիեր։

Ընդամենը գնացին 50 օֆիցէրներ և 330 զինուորներ։

ԲԷԼԳԻԱՆ։ Հրատարակված է՝ յունիսի 1-ից (14-ին) անցագրային կանոններ վերացնելու մասին Բոլգարիայի հետ յարաբերութիւնների ժամանակ։ Նատալիա թագուհին Դրագա թագուհու քոյրերի հետ միասին կարգադրութիւն արեցին, որ մայիսի 29-ին հոգեհանգիստ կատարվի ս. Մարկոսի եկեղեցում սպանված Ալէքսանդր թագաւորի և Դրագայի համար։ Կառավարութիւնը չը յարգեց Նատալիա թագուհու միջնորդութիւնը, որպէս զի մայր տաճարում մայիսի 29-ին հոգեհանգիստ կատարվի իշխան Միխայիլ Օբրէնովիչի համար։—Ուսանողները մայիսի 29-ին հանդիսաւոր ժողով են սարքում բարձրագոյն դպրոցում։ Երեկոյեան լուռ կը կայանայ բոլգարական օֆիցէրական ժողովարանում։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց օրէնքի առաջին յօդուածը երկամեայ զինուորական ծառայութեան մասին, որի հիման վրա իւրաքանչիւր ֆրանսիացի պարտաւոր է անձամբ կատարել զինուորական ծառայութիւնը։ Ապա ընդունվեց, 437 ձայների մեծամասնութեամբ 133-ի դէմ, օրէնքի երկրորդ յօդուածը, որով վերացվում են բոլոր արտօնութիւնները զինուորագրութիւն կատարելու ժամանակ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՁԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Դ. ՍԻԵՏԻՍԵՆՑ—10—11 ժ. մորթու, վենէրական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆՍԵՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան նամանց և երեխայոց հ.
Գ. Հ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Դ. Սօլոդով ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վենէրական հ.
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), ներքին և վենէրական հ.
ԿԻՆ-ԲԺԻԶԿ ՀԵՐԲԻՆԵԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵՆՑ—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ

ԲԺ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ
Անցեալ տարիների նման կընդունէ հիւանդներին կովկասեան հանքային ջրերում—ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ, բգի, քթի և ականջի հիւանդութիւնների համար։ Պեատիգօրսկ, Верхній бульваръ, д. Крымъ-Гирея. (չ. շ.) 3—10

Լոյս տեսաւ
Արիստակես եպիսկոպոս Սեդրակեանի
«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒԹԻՒՆԸ»
անունով պատմական տեսութիւնը. Մասն 1-ին։
Ծախվում է «Կենտրօնական» և «Գուտտէնբէրգ» գրախանութներում և Ալ. Ստեփանեանցի մօտ, Զուբալովի քարվանսարայում։
Գինն է 1 ր. 50 կ. ոսկի։
Իսկ ճանապարհածախով 2 բուբլի։
(հ.) 2—3

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ամառվայ ընթացքում սկսած յունիսի մէկից ընդունում է Ալէքսանդրօպոլում մանաւորապէս սիֆիլիս, մորթու, վենէրական և վիրաբուժական ախտ ունեցող հիւանդներին. Պուշկինսկի փողոց (Пушкинская ул. № 59) սեփական տուն, № 59. չ. չ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ընդհանուրի ուշադրութեանը, որ ներկայ տարվայ յունիսի 10-ին նշանակված է աճուրդ Վերայի Կամուրջից վերև գետափին գտնված քաղաքային մակոյկը կապալով տալու համար։ Պայմանների հետ կարելի է ծանօթանալ Վարչութեան գրասենեակում բոլոր առենական օրերին՝ ցերեկվայ ժամը 10-ից մինչև 2-ը։ 3—3

Բժշկ. Բ. Նաւասարդեան
որ գտնվում է ՐՕՍՏՕՎ քաղաքում
Հիւանդներին ընդունում է 11—1 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. ե. հ.) 17—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
(ներքին և ներվային հիւանդութիւններ)
Ընդունում է հիւանդներին Կովկասեան հանքային ջրերում—Պեատիգօրսկում. Верхній бульваръ, № 14. д. Кн. Гирей. (կ. ե. հ.) 3—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։ 73—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տեր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններին. ունի բէնտգէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825.
(շ. ե. հ. չ.) 39—105

Մի անձն, որ երկար ժամանակ վարել է ընկերութիւններում գործավարի և քարտուղարի պաշտօններ, յանձն է առնում վարել այդ պաշտօնները, նոյնպէս և սրբագրիչի պաշտօն թերթերի և գրքերի։ Համաձայն է գնալ այդ պաշտօններով և գաւառները։
Հասցէ՝ Աւճալեան փողոց № 38. ընակարան № 4. Մկրտիչ Պապօվեան, 2—5

ՇՈՒԼԱՎԷՐԻ մասնաւոր բուժարանի համար հարկաւոր է
ԲԺԻՇԿ
Ցանկացողներին խնդրում եմ դիմել ինձ՝
8—8 Տանուտէր Վ. Մեհրաբեան

ՊԱՆՄԻՕՆ
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ
Ընդունում է երեխաներին ամառը պատրաստել բոլոր կրթական հաստատութիւնների համար։ 23, 27, 30 2—3

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Հատոր առաջին. 1865—1871.
Գինն է 1 ռուբլի.
Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։
7—10 Դիմել «Գուttենբերգ» գրախանութը։

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ
գրախանութում վաճառվում են Կ. Մէլիք-Շահնազարեանի հետեւեալ աշխատութիւնները։

Ուղեցոյց գործնական գինեգործութեան	60 կ.
Փշրանք I գրքոյկ	15 »
Ծխախոտ և իր վնասները	10 »
Տնգլբաղ և Զուռնա Տմբլա II գիրք	40 »
Զուռնա Տմբլա III գիրք	40 »
Վազի մշակութիւնը (գիւղատնտեսական գրադարան)	1 ր.

Լոյս է տեսել «Գուտտէնբէրգ» գրախանութի հայերէն, ռուսերէն և թատրոնական գրքերի գրացուցակները առանձին-առանձին. ցանկացողներին ուղարկվում է ձրի։ Դիմել՝ Тифлисъ: Книжный магазинъ „Гуттенбергъ.“
2—3

Լոյս տեսաւ
ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑԻ
ՀԱՅԻ ԽՆԴԻՐ
վէպը, երկրորդ տպագր., գինն է 1 ր. 50 կ.
Ճանապարհածախով 1 ր. 70 կ.
ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ
վէպը, երրորդ տպագր., գինն է 1 ր. 20 կ.
Ճանապարհածախով 1 ր. 45 կ.
Տպագրվում են՝ Պոշեանի «Շահէն» և Տ. Եժի «Լուսադէմին».
Դիմել՝ Баку. Книжн. маг. С. Д. Арутюнова. (ա. օ) 21—25

Լոյս տեսաւ
ԱՐՇԱԿ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ երգած
ՊԱՂ ԱՂԲՐԻ ՄՕՏ և ԼՈՒՐԻԿ
Ժողովրդական երգերը, նօտագրեց Տրուֆֆի։
Գինը 60 կ օպէկ։
Ծախվում է՝ Թիֆլիսում — Սուզանաճեանի մօտ, Բագուում—Ինդրիժէշկի մօտ և Նուշում—Բագրատ Տէր-Սահակեանի մօտ։ 1—8

Կ. Կուսիկեան եւ Լ. Սարգսեան
ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ
Ընթերցանութեան ձեռնարկ
(Երրորդ և չորրորդ տարիների համար)
համառօտ հայերէն-ռուսերէն բառգրքով
Գինն է 70 կ օպէկ
Դիմել Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» և «Կենտրօնական», իսկ Բագու՝ Սամսոն Յարութիւնեանի և «Сотрудникъ» գրավաճառանոցներին։ (հ. շ.) 1—2

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
ԱՐԲԵՅՈՂԻ ԶԱՏԻԿԸ
պատկեր—գինը 3 կոպ.։
Դիմել գրավաճառներին։ Հեղինակին դիմողները 20 բուբլուց աւելի պահանջով կը ստանան 30% զիջում։ Առանց կանխավճարի չը դիմել։ Հասցէն—Թիֆլիս, Հալաբաբ, Լաղաբևսկայա փող. № 49։ (հ. ու. կ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ **ԱԻԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆ**
Այս յունիսի 1-ից վերջացնում է հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսում. իսկ յունիսի 12-ից շարունակելու է Աբասթումանում։ (Гостинн. „Минер. воды“)։ (հ. կ.) 1—3

Ասիաբադի կանանց բարեգործական ընկերութեան մանկական պարտէզի համար, հարկաւոր է մի գիմնազիաւարտ, հմուտ վարժուհի, ծանօթ ֆրեբելեան մեթոդին։ Պայմանների մասին դիմել՝ Асхабадъ—Мамиконьянцъ. 1—6

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախընթաց տարիների նման մայիսի 10-ից կընդունէ հիւանդներին Կովկասի հանքային ջրերում, Պեատիգօրսկում, Ելիզավետինսկի փողոցում (ռուսաց Սօբօրի դիմաց) տ. Աբխիպովի։ մ. 16,18,21,23,25,27,29,30, յ. 2,4,6,13 6—12

Թէհրանի «ՓԱՐՈՍ» ակցիոներական ընկերութիւնը պէտք ունի իր տպարանի համար
ՄԻ ՀՄՈՒԺ ԳՐԱՇԱՐԻ
ՄԻ ՎԱՐՊԵՏ ԿԱԶՄԱՐԱՐԻ
և ՄԻ ՏՊԱԳՐԻՉԻ (նակլադչիկ)։
Կը տրվի ճանապարհածախս։ Ձեռնտու ռոճիկներ։ Ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հասցէով և առաջարկել իրանց պայմանները.
Administration de l'Jmpprimerie «Pharos», Téhéran. կ. ե. հ. շ. 3—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ 5-ՐԴ №-Ը—ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

1. Լուութիւնը (շարունակ.), վէպ Ա. Ահարոնեանի, 2. Գունատ օրեր, ոտան. Դ. Դեմիրչեանի, 3. Վանի նահանգը ներկայումս, Ծերուկի, 4. Հայթուխ Սիմոնը, պատմուածք Կ. Հզօրեանի, 5. Ցուրտ է ու գիշեր, ոտան. Ա.. Իսահակեանի, 6. Զալըմ տղան (վերջ), դրամա 5 արար., Թլկատի, 7. Լրագրական գործը Անգլիայում, Տ-ի, 8. Երեկոյեան, ոտան. Տենիս, թարգմ. անգլ.* 9. Պարսկաստանի քիւրդերը, յօդ. Ե. Ֆրանգեանի, 10. Խեղճ ու անուշ Կոբէա, Ժորժ Դիւլկրոկի, թարգմ. Ֆրանս.**, 11 Նիցշէն իբրև փիլիսոփա (շարունակ), հանս Վայհինգերի. թարգմ. օր. Ս. Ի., 12. Կովկասի Թուրք ժամուլը, յօդ Տիգրանի, 13. Վրաց կեանքից և գրականութիւնից.—Տ. Փիրումեանի։

14. Բնաղատութիւն և Մատենախօսութիւն.—1) Յ. Մանանդեան և Հ. Աճառեան՝ «Հայոց նոր վկաները»,*։—2) Գրիգոր Արծրունու աշխատութիւնները, Տ. Յով.։—3) Գարեգին Մեծատուրեան՝ «Լէնտրութիւն կաթնատուների կամ կաթնոտ կովերը ճանաչելու միջոցները», Ե. Ս.։—4) Վահան Թաւարդէգեանի՝ «Բանաստեղծութիւնները», Զ.։—5) Հ. Համբարձումեան՝ «Անհունի էջերում», Ա. Մ.։—7) Պատասխան պ. Ե. Լալայեանին, Ա. վ. Ղ.։ 15. Նոր ստացված գրքեր, 16. Տնտեսական հարցեր, Կովկասի ոսկու մասին, Յովհ. Կարապետեանի, 17. Գիտութեան աշխարհից, Մարդկային մարմնին արձակած ճառագայթները, Մ. Նալբանդեանի, 18. Գիտական քրոնիկ։

19. Ներքին տեսութիւն.—«Ճանճի մէջ» պիեսի առիթով մեր ինտելիգենցիայի մասին։—† Ի. Ֆ. Փիթռեվ։—† Ֆ. Բրեգիխին։—† Շահլամեան, Լ. Սարկսեանի։ Նոր փոխառութիւն։—Էժան բնակարաններ կառուցանող ընկերութիւնը Պետերբուրգում։—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ։

20. Արտաքին տեսութիւն.—Ռուս-հապոնական պատերազմը։—Ֆրանսիայի և Վատիկանի յարաբերութիւնները։—Սասունի դէպքերը։—Գեղարուեստի և գիտութեան նշանակաւոր կորուստներ Եւրոպայում—Լենբախ, Իոկայ, Դիւկլօ, Տարդ, Ստենլի, Լ. Սարգսեանի։ Հէնրի Ստենլի, 21. Թատրոն, Լ. Մանուէլեանի «Նկարիչ Թաշճեան», Տիգրանի. 22 Պարբերական հրատարակութիւններ, 23. Խմբագրութեան կողմից, 24. Պատասխաններ, 25. Յայտարարութիւններ, 26. I Յաւելուած, Ջէյմս Մորիէր՝ «Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում», վէպ պարսկական կեանքից, թարգմ. անգլիերէնից Մկր. Կարապետեան, 27. II Յաւելուած, Իշխ. Ա. Սումբատովի՝ «Դաւաճանութիւն», դրամա 5 արար., թարգմ. ռուսերէնից Ալ. Ծատուրեան։

Շարունակում է *1904* թ. բաժանորդագրութիւնը. նոր բաժանորդներ կը ստանան բոլոր լոյս տեսած համարները սկսած № 1-ից։

ԿԱՐՄԵԼԻՏԵԱՆ ՋՈՒՐ
(Eau des Carmes). **BOVER** (Բուայիէ) (Eau des Carmes).

Համեղ է, ջղային հիւանդութիւնների ժամանակ հանգստացուցիչ կերպով է ներգործում։ Շաքարի կտորի վրա կամ մի գդալ կօֆէի հետ մի քանի կաթիլը՝ կերակրից յետոյ ընդունած՝ զգալի կերպով է ազդում ստամոքսի նեարդերի և մկանների թուլութեան դէպքում։ Ծախվում է բոլոր լաւագոյն դեղատներում։ (մ. 27, յ. 15) 1—2

Բաներ գրականութեան եւ արուեստի
Բ. ԳԻՐՔ
Ադոնց, Ն. *—Շանթ, Լ. Ես-ի մարդը, դրամա հինգ արարով։—Ահարոնեան, Ա. Մահը։—Առանձար, Տասը տարի ետքը։—Փափազեան, Վ. Արդար թէ մեղաւոր։—Օտեան, Ե. Համբարձում աղա։

Իսահակեան, Ա. 1. Ի՞նչ ես գաղտում։—2, Մենակ մանկութեան օրերն են անոյշ։—Տիրանեան, Վ. Հանգրւանը։—Յովհաննիսեան, Յ. 1. Լուսաւորչի կանթեղը, 2. Դարեր անցուցինք։—Եարճանեան, Ա. Հոգեվարքին ջահերը—1. Հոգիս, 2. Արիւն։—Անանեան, Ռ. 1. Աշնանային խոհեր, 2. Հոգ չէ, ընկերներ։—Թէքէեան, Վ. 1. Աշնան իրիկուն, 2. Խոստովանանք, Գարուն, Հեթանոս սէր։—Մալէզեան, Վ. Անհաւատը։—Կիւրճեան, Մ. Երգուրեակները։—Համբարձումեան, Ն. 1. Դարբին, 2. Կայծակն լնճ նետ։—Թումանեանց, Յար. Աղջիկ, երնէկ ալ լինեմ։—Ադոնց, Ն. Գրական նշմարներ։ Լեզուական ուղղագրական։—** Արևմտեան հայոց արդի գրականութիւնը։—Աղբալեան, Ն. Երգ ու վէրքից յետոյ։—Մուրէյ, Գ. Մի հայ փորագրիչ. Էդ. Շահին։—Մ. Նալբանդեանցի մի անտիպ գրութիւնը—Կայսպակ։

Պատկերներ և քանդակ

Բալեսարիէրի, Լ. «Բեթհովեն»։—Մարտէն, Հ. «Զարդական պանօ» I III և II։—Ագաշ, Ա. «Օրէնք»։—Ռիթ, Պ. «Կորուսեալ դրախտ»։—Թոմա, Հ. «Մենաւոր ասպետ»։—Կաուլբախ, Ֆ. «Գուեռնիկա»։—Զուլօագա, Ի. «Գայթակղութիւն»։—Բենար, Պ. «Ուրժան»։—Ֆալգիէր, Ա. «Պարուհի»։—Շահին, Է. «Տիկ. Ֆրանսի պորտրեար»։—Սուրէնեանց, Վ. «Հռիփսիմէ և Գայիանէ»։—Մահտեսեան, Է. «Անապատ ափ»։—Կաղէսեան, Յ. «Փոթորիկ Մարմար ծովում»։—Թադէոսեան, Ե. «Ընթերցանութիւն»։

Ա. և Բ. գիրքը միասին արժէ 4 ր., ամեն մէկը առանձին—2 ր. 50 կ.։

Դիմել՝ Григорію Аристакесянцъ С. Петербургъ. Басейная ул. 33. և Թիֆլիս՝ «Гуттенбергъ» գրավաճառանոց։ 2—3

Дозволено Цензурою. Тифлисъ, 26-го мая 1904 г. Խմբագիր «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81